

23.3 07

331.7:63(474)

9-44

Պ. ՉԵՐԴԱՆՅԵԿ

Յ

Ե
Վ

ԱՌԱՋ

ՀԻՄԱ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԵՆՔԸ ՅԵՎ ՄԻՈՒ-
ԹԵՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱ-
ԳԻՐԸ—ԲԱՏՐԱԿՆԵՐԻ, ԲԱՏՐԱԿՈՒ-
ՀԻՆԵՐԻ ՅԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ՊԱՇՏ-
. . . . ՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1928

16 JUL 2013

15 JAN 2010

Պ. ՉԵՐԴԱՆՅԵԿ

331.7:63(47-41)

9-44

ար

Ա Ռ Ա Զ ՅԵԿ Հ Ի Մ Ա

Խորհրդային ունեւր յեկ միութեա-
կան աշխատանքի պայմանագիրը
— բարակների, բարակունիների
յեկ հովիւների պաշտպանությունը


1003
14142

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ



1928



ԱՌԱՋԱԲԱՆ

Այս գրքուկից կարելի չե ոգտվել բառարանների ընդհանուր ժողովում զեկուցում կարգալու կամ բառարանների խմբակի համար ընթերցում-գրուց անելու: Ավելի պատրաստված զեկուցողի համար գրքուկը կարող է ծառայել վարպետ զեկուցման կոնսպեկտ (համառոտ շարադրանք): Իսկ չեթե աշակերտի զեկուցող չկա, բավական է այս գրքուկը կարգալ բարձրաձայն: Պարզ է, ավելի լավ կլինեն, իհարկե, չեթե զեկուցողը կամ կարդացողը, գրքուկը բարձրաձայն կարդալով, կարողանա, ընթերցման ժամանակ, առանձին տեղերը լրացնելու նպատակով, իրենից տրդեն որինտակներ բերել տեղական փորձից և աշխատամանագրի զործնականից: Դա վերոջ չափով կաշխուժացներ ընթերցումը: Բնագրում ցուց է տրված, թե վորտից կարելի չե որինտակներ բերել:

Զեկուցողը պատրաստ պիտի լինի հարցերին պատասխանելու. ունկնդիրները կարող են հարցեր տալ նրան աշխատանքի պայմանագրի պրակտիկայի, միության, բառարանների և հովիթների աշխատանքը պաշտպանող որենքների մասին և ալն: Վարպետի զեկուցողը կարողանա ալց հարցերին ուղիղ պատասխաններ տալ, նա պետք է նախապես պատրաստվի ընթերցման համար: Ոգտակար է, վոր ինքը հիշե տեղական աշխատամանագրի պրակտիկայից ամենակա-

րևորը (վարձվելու պայմանները այս կամ այն տընտեսության մեջ, աշխատանքային կոնֆլիկտներ ու նրանց քննությունը և այլն) և կարգա միջանի գրքուկ, վորոնց ցուցակը բերում ենք այստեղ,

1. Устав союза сельхозлесрабочих.

2. АНЦЕЛОВИЧ — Очередные задачи союза сельхозлесрабочих.

3. В. КУЛИКОВ. — Как организовать, защищать и воспитывать батрачество и пастушество.

4. В. КУЛИКОВ. — Как советская власть защищает пастухов.

5. П. ГРИВОВ. — Батрацкий трудоговор.

6. Г. МОЙСЕЕВИЧ. — Сел.-хоз. рабочие во время первой революции.

— Примириательные комиссии по трудовым конфликтам в крестьянском хозяйстве.

9. БУРЕНКО. — Беседа с пастухами и подпасками.

10. Плакат: „На союз надейся, но и сам не плошай“.

I. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՌԱՋ

ՑԱՐԱԿԱՆ ԿԱՐՎԱԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՆՔԻ ՈՐԺՈՎ ՃՆՇՈՒՄ ԵՐ ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶՏԱՎԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Ցարական-կալվաճատիրական կառավարությունը 1861 թ. գյուղացիներին «աղատություն» տալով, խլեց նրանցից այն հողերը, վոր ոգտագործում էին նրանք (5,262,000 դեսյատին), և դրեց նրանց վրա ահազին հարկեր (վոր պիտի տալին պետության) և վճարումներ, վոր պիտի տալին կալվաճատերերին—իբրև փրկանք—միլիարդուկես ուրբլի:

Ծանր հարկերը, փրկանքի վճարումները, հաճախակի անբերրիությունը տարեցտարի վատթարացրին գյուղացիության գրությունը: Վատ մշակված հողը չեւ կերակրում, յուրաքանչյուր նոր բերան ծանրություն եւր, ուրյագնիկը պարտքի տեղ տանում եւր վերջին կովը:

Հետզհետե ալելի ու ալելի աճում եւր սակավահող, անհող, ձի չունեցող ընտանիքների թիվը, ալելի մեծ թվով գյուղացիներ ելին գնում աշխատանք փնտռելու—գնում ելին ստրկանալու գործարանատիրոջը, կուլակին և կալվաճատերերին:

Գյուղացիների խնդրանքները՝ իրենց դրությունը լավացնելու վերաբերմամբ, ֆնում ելին անպատասխան: Ավելի հաճախ կառավարությունը ալդ գանգատներին պատասխանում եր նոր ճնշումներով: Գյուղացիների հորինած մի յերգում ասվում է.

Մեր գեղական գանգատով
գնացել ուս թագովորի մոտ,
բայց բռնեցին ճանապարհին,
ու չհասա թագավորին,
մեկ էլ աչքս բացել Սիբիրում—
մութ ու խոնավ հանքերում:

Այսպես եր պատասխանում կալվածատիրական-ցարական կառավարությունը չքավոր գյուղացիներին, վորոնք հույս եյին դնում նրա ոգնություն վրա:

— Ոգնություն խնդրելու համար — տաժանակիր աշխատանք:

Հարկերից, կալվածատերի ծաղր ու ծանակից և նրանց տնտեսություններում տաժանակիր աշխատանք կրելուց հուսահատության դուռը հասած գյուղացիությունն ապստամբությունները, բատրակների գործադուլները դաժան կերպով ճնշվում ելին:

Բավական եր, վոր կալվածատերերի մոտ աշխատող բատրակներն ու բատրակուհիները, աշխատանքի տաժանելի պայմաններից հուսահատության դուռը հասած, աշխատանքը թողնելին, — կալվածատերն իսկույն աչք բանը «խռովություն» հր համարում և քաղաքից զինվորներ կանչում:

Զինվորները, սպալի, պրիստավի և ուրյադնիկի գլխավորությամբ, տնտեսուն ընկած վնասում ելին գործադուլն սկսողներին և, հրապարակ տանելով, ձե-

ծում ելին: — «Ի՛նչպես են համարձակվում կալվածատիրոջ աշխատանքը թողնել: Ձե՛ր վոր նա դրանից կըքայքայվի»:

Այն բատրակները, վորոնք համարձակվում եյին կալվածատիրոջ աշխատանքի ծանրություն, նրա անիրավություն մասին խոսելու, նրանց ձեռնելը և դատաստանի յենթարկելը սովորական բան եր:

ՅԱՐԱԿՆ ՈՐԵՆՔԸ ԲԱՏՐԱԿԻՆ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՐ ՎԱՐՁՈՂԻ ԿԱՄԱՅՆԱԿՆԵՐԸ

Կալվածատիրոջը պաշտպանում եյին ցարական որինքները, իսկ բատրակին ալդ որինքները ճնշում ելին: Վարձված բանվորն ընկնում եր ստրկության մեջ: Ահա ինչ եր զրված ցարական որինում բատրակի աշխատանքի մասին *).

«Վարձողին թույլատրվում է բանվորի աշխատավարձից հանուրդներ կատարել:

«Բանվորի չներկայանալու կամ ինքնակամ հեռանալու դեպքում վարձողին իրավունք է տրվում, պայմանագրերը վերջացնելու ժամանակ, բանվորից հատուցւմ պահանջել այն չափով, վոր չանցնի պայմանագրում վորոշված յերեք ամսվա աշխատավարձից:

Վոստիկանությունը, վարձողից հայտարարություն ստանալով բանվորի չներկայանալու կամ ինքնակամ հեռանալու մասին, միջոցներ է ձեռք առնում նրան վորոնելու և այնուհետև պարտավորեցնում է բանվորին՝ վերադառնալ վարձողի մոտ, նշանակում է դրա համար, ըստ տեղական հանգամանքների, ամենակարճ ժամանակամիջոց և բացատրում է բանվորին նրա պարտականությունները և նրան առաջադրված պահանջները չկատարելու հետևանքները»:

*) Քաղվածքներն արված են «Положение о найме на сельские работы», Издание 1906 года.

Այս որենքը կալվածատերին և կուլակին թույլ
եր տալիս բատրակի վարձից հանուրդներ կատարել
ամեն առթիվ:

Տիրոջը թվում է, թե բատրակը վատ է աշխա-
տում, — տուգանք վճարիր «անփուշթ աշխատանքի
համար»:

Յեթե կալվածատերը կամ կուլակ տերը ասեր.
«այսոք գիշերն աշխատիր», իսկ բատրակը հաշխա-
տեր, — տուգանք վճարիր «տիրոջդ չլսելու համար»:

Յեթե բատրակը պատահաբար տիրոջ ամանը
կոտրեր, — տուգանք վճարիր «տիրոջդ դուլքին ֆլաս
հասցնելու համար»:

Բատրակն ուշանար աշխատանքից, — տուգանք
վճարիր «գործը լքելու համար»: Մի տնտեսության
մեջ, որինակ, մեքենավարին տուգանել էլին կես ամս-
վա ռոճիկի հափով նրա համար, վոր ճաշից հետո
քնել եր մի քանի ավելորդ րոպե:

Տերը բատրակին հայհոյում է, — մի համարձակ-
վիր մի խոսք անգամ ասելու, ալլապես կտուգան-
վես «կոպտության համար»:

Ավելին. յեթե բատրակը տիրոջից գանգատվում
եր դատարանին, և դատարանը մերժում եր նրա գան-
գատը, — իսկ այդպես լինում եր մեծ մասամբ, — այդ
դեպքում տերը, ըստ որենքի, հանուրդ եր կատարում
բատրակի վարձից այն ժամանակի համար, վոր կոր-
ցըրել եր ինքը դատավարության վրա:

Ցարական որենքով տերը կարող եր բատրակին
նեղել տուգանքով և ծաղր ու ծանակի յենթարկել
կամեցածի հափ:

Իսկ բատրակը պարտավոր եր, որենքով, «պահ-

պանել տիրոջն ու նրա մարդկանց՝ վորեւե մեկին
վտանգ սպառնալու դեպքում»:

Տերերը, որենքից ոգտվելով, չերեմն ստիպում
ելին ամենամուլթ և անգիտակից բատրակներին դուրս
գալ հենց իրենց ընկեր բատրակների դեմ:

Հաշիվ ստանալու միջոցին խաբված ժամանակա-
վոր բանվորներն, որինակ, գործադուլ ելին անում, —
կառավարիչը կամ կալվածատերը հրացաններով զի-
նում են մշտական (տարեկան) բանվորներին և ստի-
պում պաշտպանել աղայի բարիքն ու աղային՝ «ան-
կարգությունից»:

Ծանր եր բատրակի և բատրակուհու կյանքը ցա-
րական որերին:

Չեր կարելի և տիրոջից հեռանալ — վոստիկանու-
թյունը չետ եր բերում, և մինչև անգամ «բացատրում
բանվորին իր պարտականությունը», այսինքն, պարզ
ասած, ծեծում եր, իսկ տերը յենթարկում եր տու-
գանքի:

ՊՐԱՓՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ — ԲԱՆՏ

Կալվածատերի կամ կուլակ տիրոջ դեմ դուրս գա-
լիր, հավելում պահանջելի, կամ աշխատանքը թող-
նելի, — բանտ կերթայիր:

Ցարական որենքը մանրամասն սուսում եր, թե
ինչ է սպասում այն բատրակին, վորը չի ցանկա-
նում ճորտի պես աշխատել կալվածատերի և կուլակի
մոտ: Ահա մի քաղվածք նույն տեղից.

**Բասրակային ժողովին մասնակցելու համար—
կալանավորական վաճառ**

«Հրապարակային ժողովին մասնակցելու մեջ մեղադրվողը զրկվում է, յեթե նրա հորժածը չի ներկայանում ավելի ծանր հանցագործություն, անհատական է ձեռք բերած իրավունքներից ու արտոնություններից և հանձնվում է ուղղիչ կալանավորական բաժանմունքին»:

Գործադուլին մասնակցելու համար—բանս

«Գյուղական բանվորները, վոր ինքնակամ, միմյանց հետ համաձայնության գալով, դադարեցնում, ընդհատում կամ չեն վերսկսում գյուղական աշխատանքները, յեթե նրանց գործածը չի ներկայացնում ավելի ծանր հանցագործություն, յենթադրվում են բանտարկության՝ վեց ամսից մինչև մի տարի»:

**Սահեսակցական միություն կազմակերպելու
համար—բանս**

«Նա, ով մեղադրվում է միությանը մասնակցելու մեջ, այնպիսի միության, վորն իր գործունեությունն ուղղում է գյուղացիական բանվորներին զրգուխելու—ինքնակամ, միմյանց հետ համաձայնության գալով, դադարեցնել, կանգնեցնել կամ չվերսկսել գյուղական աշխատանքները, վորպես աշխատանքները պարտավոր են կատարել վարձման պայմանագրով, պատժվում է բերդարգելություն մի տարի չորս ամսից մինչև չորս տարի ժամանակով, զրկվելով անհատական է ձեռք բերած իրավունքներից ու արտոնություններից»:

Ցարական կառավարության չերկու որենքն ել՝ «գյուղատնտեսական աշխ. վարձելու մասին» և «գյուղատնտես. բանվորների շրջանում գործադուլ ծագելու դեմ կանոնները», վոր գործում էին մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, բատրակին հանձնում էին վարձողի—կալվածատիրոջ և կուլակի—լիակատար կա-

մայականության: Բատրակն իրավադուրի էր: Բատրակի վաստակը մուրացկանի վաստակ էր: Բատրակները և բատրակուհիներն աշխատանքի տեղից վերադառնում էին պատուոված ու անվորի:

Ուկրայնայում բատրակների մասին այսպիսի չիրգ կա.

Տղերը պարծենում էին Տավրի *) գնալիս, թե քաթանե շորեր կհագնեն ու կոշիկներ, բաց ցրտին յեկան վոտները բաց: Դուրս չեկավ մայրը խրճիթից ու դառն անիծեց տղաներին.—

վողջ ամառն աշխատեցիր,

վոչ լուր կար ձեզից, վոչ խաբար,

հիմի ձմեռն յիկել էք պատրաստ հաց ուտելի:

Թագավորին ու կալվածատերերին ձեռնուռ յեր, վոր բատրակը ճորտ լինի հարուստի մոտ: Թագավորի և կալվածատերերի որենքը վոչնչով դեմ չեր, վոր բատրակը միայն հացավոր աշխատի:

Յեթե բատրակը վորձում եր հրաժարվել ճորտական պայմաններում աշխատելուց, ցարական որենքն ուժով ստիպում եր նրան աշխատելու:

Գործարանատերերը, կալվածատերերը և կուլակները կարող էին միմյանց հետ ուղած միությունը և համաձայնությունը կազմել՝ բատրակի վարձն իջեցնելու համար, կարող էին խոսքները մին անիլ—աշխատանքի չվերցնել հեղափոխականորեն տրամադրված բատրակներին ու բանվորներին: Վոստիկանությունը, ցարական որենքի վրա հենված, ոգնում եր

*) Տավրիկյան նահանգ:

նրանց այդ բանում, կազմում եր. «անբարեհույսներին» ցուցակը և այդ «անբարեհույսներին» տալիս այնպիսի թուղթ, վորով մի տեղ աշխատանքի չեյին ընդունում:

Յեթե բատրակը փորձում եր քննել իր զրու-
թյունը բատրակների ժողովում, յեթե բատրակները
խռճերը մին եյին անում գործադուլ՝ անելու, յեթե
բատրակները փորձում եյին միութուն կազմելու,
թագավորի և կալվածատերի որեւիքը նրանց ասում եր.

—Բատրակների ժողովին մասնակցելու համար—
կալանավորական վաշտ կերթաք:

—Գործադուլին մասնակցելու համար—բանտ:

Իսկ արհեստակցական միութիւն կազմակերպե-
լը նկատվում և վորպես քաղաքական հանցագործու-
թյուն, ուստի և պրոֆմիության մասնակցելու հա-
մար բանտ եյին նստեցնում:

Յարիզմի ամբողջ պետական ապարատը (զորք,
վոստիկանութիւն, դատարան, հոգևորականութիւն
և այլն) ուղղված եր բատրակության դեմ և կալվա-
ծատերերին պաշտպանելու:

Ուրյադնիկը, ժանդարմը և դատական աստիճա-
նավորը բանտարկության բողոքը ճնշում եյին մտրա-
կով ու՝ բանտով, քահանան—յերկնային արքայու-
թյան մասին հեքիաթներ պատմելով:(ՈՐԻՃԱԿՆԵՐ ԲԵՐ
ԲԱՏՐԱԿՆԵՐԻ յե՛վ ԻՈՎԻՎՆԵՐԻ ԿՅԱՃԲԻՅ՝ ցարիզմի ուրօք,
սվլալ ռեդից):

Բատրակների մեջքին լավ նստած, նրանց աշ-
խատանքից ու քրտինքից ճարպակալում եյին կալ-
վածատերը, կուլակը, գործարանատերը, ժանդարմն
ու ուրյադնիկը և դատական աստիճանավորն ու քա-
հանան:

II. Ի՞նչ ՏՎԵՑ ԲԱՏՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀՈԿՏԵՄ- ԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՐՀՐԴԱՆԻՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ ՊԱՅՏՊԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՏ- ՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ԱՅԽԱՏԱՆՔԸ

Քաղաքի և գյուղի բանվորները՝ գյուղացիների
հետ միացած, կոմմունիստական կուսակցության դե-
կավարութեամբ, տապալեցին թագավորին ու նրա
արքայականներին՝ իրենց բոլոր ճորտական որեւիքնե-
րով: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը բատրակու-
թյանը տվեց քաղաքական ազատութիւն և յերկաթի
ավելով սրբեց ստրկության վերջին հետքերը և ցարա-
կան իրավակարգի անիրավութիւնը:

«Գյուղատնտեսական աշխատանքների համար
բանվորներ վարձելու մասին» լեղած ցարական որեն-
քը տարածվում եր, գլխավորապես, կալվածատիրա-
կան տնտեսութիւններում աշխատող բանվորների
վրա: Իսկ գյուղական տնտեսութիւններում աշ-
խատող բատրակի աշխատանքի մասին առանձին վոր-
հե որենք չկար:

Սորհրդային որենքները պաշտպանում են բա-
տրակի և բատրակուհու, հովվի և հովվի ոգնականի աշ-
խատանքը:

Այն թե ինչ և ասված «գյուղական տնտեսութ-
յուններում վարձու աշխատանք գործադրելու պայ-
մանները մասին «Ժամանակավոր կանոններում» և
հրահանգներում.

Հոդված 1. («Ժամ. կանոն.». Այս ժամանակավոր կա-
նոնները տարածվում են այն գյուղական տնտեսություն-
ները վրա, վորոնց մեջ վարձու աշխատանքը հանդիսանում
և ուսանողի:

ԾԱՆՈԹ.—Արդյունաբերական տնտեսությունները նը-
կատմամբ գործադրվում են խորհրդային տնտեսություննե-
րը աշխատանքի պայմաններին վերաբերող վորոշումները:

Հոդ. 2 (Հրահանգի). Բատրակ կամ բատրակուհի վարձե-
լիս վարձողը պետք է նրանց հետ կամ նրանց պրոֆանի-
թյան հետ զբաղվող համաձայնություն կնքի աշխատանքի
պայմանների մասին (աշխատանքային պայմանագիր):

Համաձայնության պայմանները (աշխատանքային պայ-
մանագիրը), «Ժամ. կանոններ» և այս հրահանգի համե-
մատ, չեն կարող վատթարացնել վարձվողի զբոսը: Ամեն
մի համաձայնություն (աշխատանքային պայմանա-
գրեր), վորոնք, «Ժամ. կանոնները և այս հրահանգի համե-
մատ, լավացնում են բատրակի թե բատրակուհու զբոսը,
—հանդիսանում են որինական:

Հոդ. 7 («Ժամ. կանոն.». Վարձողը պարտավոր է բա-
րակին կամ բատրակուհուն շարաքվա մեջ տրամադրել
մի որ (տոնական) հանգստի համար:

Հոդ. 8. («Ժամ. կանոն.». Բատրակի կամ բատրակուհու
աշխատանքի վարձատրության շափը սահմանվում է հա-
մաձայնությունը, բայց չպետք է ցած լինի պետական աշ-
խատավարձի միևնույնից, ալյալ վայրի համար սահմա-
նված:

Հոդ. 16 (Հրահանգի). Վարձողը բատրակի թե բատրակու-
հու աշխատավարձից գումարներ բռնելու կամ հանուրդներ
կատարելու իրավունք չունի:

Հոդ. 13 («Ժամ. կանոն.». Գյուղատնտեսական ամբողջ
տարվա ընթացքում վարձու աշխատանքից ոգավոր գյուղա-

կան տնտեսությունը պարտավոր է բատրակի թե բատրա-
կուհու հիվանդության դեպքում, նույնպես և բատրակուհու
ծննդաբերության դեպքում, յեթե բատրակը կամ բա-
տրակուհին ալյալ տնտեսության մեջ աշխատել են մի ամ-
սից վոչ պակաս. տալ նրանց պայմանավորված աշխատա-
վարձը, նաև բնակարան ու ուտելիք մի ամսվա ընթացքում,
սկսած այն մոմենտից, յեբր աշխատանքը դադարեցնում են
հիվանդության և ծննդաբերության հետևանքով:

Հոդ. 24 (Հրահանգի). Բատրակ (բատրակուհու) պրոֆ-
անիթյան անդամ լինելը և հատարական աշխատանքնե-
րին մասնակցելը չեն կարող նրանց հեռացնելու պատճառ
ծառայել:

Բատրակները վարձելուն վերաբերող ցարական
որենքներն ուղղված են ին բատրակի դեմ:

Խորհրդային որենքը՝ բատրակներին աշխատան-
քի մասին, պաշտպանում է բատրակին տիրոջ խա-
րենքալուծությունից ու շահագործումից: Պարտադիր զը-
րավոր պայմանագիրը, վոր զբանցվում է գյուղխոր-
հըրդում, սպահովում է բատրակի համար վճարման
այն պայմանները, վորոնց հիման վրա նա պայմա-
նավորվել է տիրոջ հետ՝ պայմանագրի գործողություն
ամբողջ ընթացքում:

Խորհրդային իշխանությունը խստիվ պատժում
և բատրակին և բատրակուհուն խաբող տիրոջը: Յա-
րական կառավարություն որոք միշտ իրավացի յեբ
վոչ թե բատրակն ու բատրակուհին, ալ տերը:

Յարական որենքը չեբ արգելում տիրոջը ստի-
պել բատրակին և բատրակուհուն, հովվին և հովվի
ոգնականին աշխատելու բոլոր տոներին, միայն թե
տերը, ինչպես ցարական որենքում է ասվում, «աշա-
կցեր բատրակին չեկեղեցի հաճախելու»: Դա չեբ հաս-

կանալի չի. քահանան բատրակներին սովորեցնում եր
խոնարհություն և հնազանդություն:

Խորհրդային որենքը պահանջում է անպայման
տալ բատրակին շաբաթվա մեջ մի որ՝ հանգստի հա-
մար:

Միայն տնտեսության ծալք անհրաժեշտու-
թյան դեպքերում, այն ել միայն այն դեպքերում,
չերբ տերն ինքը մասնակցում է աշխատան-
քին, որենքը թույլատրում է բատրակին՝ աշխա-
տել տոն և վոչ աշխատանքային որերը, սակայն տե-
րը պետք է վարձատրի այդ աշխատանքը ամենապա-
կասը այն չափով, վորով վարձատրում է սովորական
աշխատանքի որը:

Տիրոջ հետ պայմանավորվելով՝ բատրակը կա-
րող է և պետք է ձգտի, վոր տոն որվա աշխատանքը
վարձատրվի մեկ ու կես կամ կրկնակի չափով:

Թագավորի որոք բատրակը չեր կարող տնից
հեռանալ առանց տիրոջ թույլտվության:

Խորհրդային իշխանության որոք բատրակն ա-
զատ ժամանակը կարող է գնալ ուր ուզում է:

Ցարական որենքը տիրոջն իրավունք եր տալիս
բատրակի և բատրակուհու աշխատավարձից հանուրդ-
ներ կատարել և տուգանքներ վերցնել:

Խորհրդային որենքն արգելում է ամեն տեսակի
ինքնակամ հանուրդներ կատարելը:

Յեվ դարմանալի չէ, վոր ցարի և կալվածատե-
րերի որոք բատրակն աշխատանքները վերջացնելուց
հետո պարտ եր մնում վարձողին և հետևյալ սեզոնին
պետք է աշխատեր գրեթե ձրի, միայն հացափոր:

Խորհրդային իշխանության որով բատրակը կա-

րող է տիրոջից պահանջել իր աշխատավարձն ամբող-
ջությամբ, ըստ վորում ամենանվազ աշխատավարձը
չի կարող պակաս լինել նրանից, ինչ սահմանում է
պետութունը տվյալ վայրի համար, այսպես առած
«աշխատավարձի պետական միջնորդի» վոչ պա-
կաս: Այսպես է կոչվում ամենանվազ աշխատավարձը,
վոր հայտարարել է Աշխատողի միությունը ԽՍՀՄ շուրաքան-
չուր ռաչոնի համար, վորոջ ժամանակով. վոչվոք ի-
րավունք չունի այդ միջնորդից պակաս վճարելու
աշխատանքի համար:

Ցարական որենքով վարձողը պարտավոր եր
միայն ռաչոնից հիվանդ բատրակին իր բնակության
տեղն ուղարկելու: Սովորաբար, հետևելով ցարական
որենքների ցուցմունքներին, տերը հիվանդացած
բատրակին ուղղակի դուրս եր անում տնից:

Խորհրդային որենքը պահանջում է, վոր վար-
ձողը հիվանդ բատրակին կամ բատրակուհուն առնի
հիվանդանոց կամ հիվանդի համար բժիշկ կանչի:

Բատրակի կամ բատրակուհու աշխատավարձը՝
փող, ուտելիք, ապրելու տեղ—հիվանդության կամ
ծննդաբերության միջոցին, խորհրդային որենքով
պահանջվում է մի ամիս ժամանակով, չեթե տնտե-
սությունը բատրակին կամ բատրակուհուն վարձել է
ամբողջ սեզոնի համար, և նրանք մինչև հիվանդու-
թյունը կամ ծննդաբերությունն աշխատել են մի ամիսից
վոչ պակաս: Յեթե տնտեսությունը բատրակին կամ
բատրակուհուն վարձել է առանձին աշխատանքների
(հնձելու, հարելու և այլն) համար, և նրանք տնտեսու-
թյան մեջ աշխատել են չերկու շաբաթից վոչ պակաս,
հիվանդության և ծննդաբերության դեպքում նրանց

աշխատավարձը (փող, սնունդ և ապրելու տեղ) պահպանվում է չեղելու շարաթից վոչ պակաս:

Թագավորի որոք բատրակներն իրավագույն կան, նրանք չեն կարող վոչ ժողովի հավաքվել, վոչ դործողուլ անել, վոչ պրոֆմիուլթյուն կազմակերպել:

Խորհրդային իշխանութունը բատրակներին ոգնում է կազմակերպվել սեփական պրոֆմիուլթյան մեջ, այսինքն՝ գյուղատնտեսական և անտառային բանվորների միության մեջ:

Ցարական իշխանութունը պրոֆմիուլթյան մեջ աշխատելու համար բանտ էր նստեցնում:

Խորհրդ. իշխանության որոք միության անդամ լինելու կամ հասարակական աշխատանք տանելու համար տերը չի համարձակվի բատրակին ու բատրակուհուն արձակել: Խորհրդային իշխանության որով միության ներկայացուցիչն ոգնում է գյուղատնտեսական և անտառային բանվորին՝ կնքել ձեռնտու աշխատանքային պայմանագիր, սովորեցնում է, թե ինչպես պետք է իր շահերը պաշտպանել:

ԲԱՏՐԱԿԻ ՊԵՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՐՉԱՊԻ ՀԵՏ ՑԱՐԻՉՄԻ ՈՐՈՒ ՍԱՐԿԵՑՆՈՒՄ ԵՐ ԲԱՏՐԱԿԻՆ

Ցարական որերին թե ինչ պայմաններով էլին բատրակները վարձվում կալվածատերերի կողմից և թե ինչ պայմանագրեր էլին կնքվում կալվածատերերի ու բատրակների միջև, չեղում է հետևյալ ճորտական պայմանագրի որինակից: Այսպիսի պայմանագրերը սովորական էլին: Ահավասիկ կալվածատերոջ մի պայմանագիր բատրակի հետ:

Կալվածատեր կոմս Պետրոս Բեհսուրյան

մեջ կառավարված պալատագրի որինակ

«Յև, գեղջկուհի... սեփական կամքով վարձվեցի... կոմս Պետրոս Բեհսուրյան մեջ՝ գյուղատնտեսական աշխատանքների համար, ինչ աշխատանք էլ ինձ հանձնեն, ընդամենը 144 բանվորական որվա համար, ուտելիքի ծախսը ինձանից, ամբողջ ժամանակի համար 34 ուրբի աշխատավարձով, վորի հաշվին ստացել եմ 10 ուրբի կանխավճար, իսկ մնացածը պիտի ստանամ այնուհետե, վորքան կը ծառայեմ:

1. Աշխատանքի չեղել արևածագին և աշխատել մինչև արեւ մայր մտնելը:

2. Յեթե յես աշխատանքը թողնեմ առանց որինական պատճառների, յես պետք է կանխավճարը վերադարձնեմ կրկնակի, չպահանջելով աշխատանքիս համար վոչ մի վարձաբաժնի:

3. Պարտավորվում եմ աշխատանքի դուրս գալ իսկույն, հենց վոր կհանչեն:

4. Յեթե տնտեսությունը կանչել ինձ վորեւ աշխատանքի տուն կամ կիրակի որ, յես իրավունք չունեմ աշխատանքից հրաժարվելու:

5. Յեթե տուն կամ լի որը առանց տնտեսության թույլտվության գնամ վորեւ տեղ, պարտավոր եմ այդ պարսպ անցրած որերի փոխարեն աշխատել:

6. Յեթե յես հիվանդանամ կամ մեռնեմ, իմ փոխարեն պիտի աշխատի իմ ընտանիքը:

7. Վոչ մի դեպքում յես չեմ կարող աշխատանքը թողնել մինչև ժամանակը լրանալը:

Այս պայմանները ինձ հայտնի են, վոր և ստորագրում եմ..

Այսպիսի պայմանագրեր քիչ և տարբերվում սեփական անձն ստրկության ծախելուց: Գրեթե յուրաքանչյուր կալվածատիրական տնտեսության մեջ բատրակները կնքում էլին այսպիսի պայմանագրեր:

Միքանի կալվածատերերի թվում էր, թե այսպիսի պայմանագրերը դեռ քիչ են ստրկացնում բատրակին:

Նրանք պահանջում էին, վոր բատրակն առանձին պատիճներ տա կալվածատիրոջ:

Այսպես, որինակ, Դոնի կալվածատերերից մեկը պայմանագրի մեջ մտցրել էր հետևյալ կետը. «Պարոնին, նրա կնոջը և չերեխաներին հանդիպելիս բանվորը պարտավոր է 20 քայլ լետ քաշվել և, առանց գլխարկի, ուղիղ կանգնել այնքան ժամանակ, մինչև վոր տերերը կանցնեն կողքից: Մեծարել տերերին, նրանց թվում և ծծկիր յերեխաներին, այսպես պարոն այս-ինչ, անուն, հաշրանուն»:

Բատրակը կամ բատրակուհին իզուր կփորձելին դատաստան գտնել տիրոջ դեմ: Պրիստավը, գավառապետը միշտ կարող էին գործը շուռ տալ այնպես, վորպեսզի մեղավոր դուրս գա բատրակը:

Ահա իրական մի դեպք, վոր գրված է «Волжский листок» թերթում, 1905 թվին:

«Բանջարանոցատեր վոյն Սոլովյով (Պոլտավայի նահանգ, Պրիլատինի գավառ) պայմանագրով վարձում է, գավառակային վարչութուն չեկած, բանվորուհիների և նրանց միջև բաժանում «պարտականութունները». սա պետք է այս անի, նա՝ այն:

— Իսկ դու,— դիմում է նա մի աղջկա,— իմիջի ալյոց կլինես ինձ մոտ վորպես հարձ:

Աղջիկը, պարզ է, հրաժարվում է: Բանջարանոցատերն անմիջապես հիշեցնում է պայմանագրերը:

— Պայմանագրում, դիտե՛ս, ինչ է գրված: Դու պարտավոր ես անել այն, ինչ կհրամայեմ: Յես հրամայում եմ հարձ լինես, նշանակում է իրավունք չունես հրաժարվելու:

Բայց վորովհետև աղջիկը չի համաձայնում, Սոլովյովը կարգադրում է լծել նրան յեղան լծով և քշել դաշտի միջով: «Զթողենք քնի, մինչև խելքի չգա»: Յեվ աղջկանը միքանի որ շարունակ լծում էին առավոտից. լծին կապում էին կաղնե փոցխեր, և նա դրանք քար էր տալիս մինչև յերեկո: Ու թե ինչով էլին քշում նրան—մտրակով թե քնքուշ խոսքերով—կարելք չկա ասելու:

Գյուղացիները փորձում են այդ տանջանքների մասին հայտնել վոստրիկանութանը: Ուրյադնիկը պատասխանում է.

— Եղպես գործերը մեզ չեն վերաբերում:

Վերջապես աղջիկը վճռում է «պայմանագիրը խախտել» և հեռանալ: Այդ ժամանակ Սոլովյովը խնդիր է տալիս գավառապետ Իվանենկոյին: Գավառապետն աղջկանը, պայմանագիրը խախտելու համար, դատապարտում է յոթ որվա բանտարկութան:

— Բայց չե՞ վոր Սոլովյովը ուզում էր գողով ինձ իր հարձը դարձնել,—ասում է մեղադրյալը:

— Դա գործին չի վերաբերում,—պատասխանում է Իվանենկոն: Սոլովյովի խնդրի մեջ հարձի վերաբերյալ վոչինչ չի ասված:

— Բայց ախր նա տանջեց, լծեց:

— Յեթե գտնում ես՝ դա վստ էր—գանգատ տուր,—խորհուրդ է տալիս Իվանենկոն:

«Հանցավորը» բանտարկվում է, իսկ Սոլովյովը ասում է մյուս բանվորուհիներին.

— Լսեցի՞ք, ինչ են անում պայմանագրերը խախտելու համար: Ինչ հրամայում եմ, այն ել պիտի անեք:

Յերբեմն տերերը փորձում էին հիմարացնել մութ, անգիտակից բառերակուհուն նրանով, թե պաշմանազրուում նա ստորագրել է՝ կատարել բոլոր հրամանները, իսկ յերբեմն ուղղակի դիմում էին բռնության: Բառերակուհիներին հարկադրանքով տերերի հետ կենակցել տալու, նրանց վրա բռնություն գործ դնելու դժպքերը սովորական բան էին:

Ցարական-կալվածատիրական պայմանագիրը բառերակին վոչ միայն ստիպում էր աշխատել մինչև հալից ընկնելը, այլև ստորացնում էր բառերակին, դարձնելով նրան ստրուկ:

Բանվորների և գյուղացիների Հոկտեմբերյան հեղափոխությունը, վոր ստեղծեց խորհրդային իշխանություն, կալվածատերերին ընդմիշտ դուրս շարտեց ԽՍՀՄ-ից, և նրանց հետ միասին մի կողմ նետեց և անհնարին դարձրեց ճորտական պայմանագրերը:

ՊՐՈՓԵԻՈԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ՊԼԵՄԵՆԱԳԻՐԸ — ԲԱՏՐԱԿԻ

ԱՇԽԱՏԱՆԻ ՊԼԵՄՊԼԵՆՈՒԹՅԱՆ Ե

Վարձվող բառերակը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավահավասար քաղաքացի, պայմանագիր է կնքում միայն աշխատանքի պայմանների մասին: «Աշխատանքի պայմանագիրը», —ասում է խորհրդային որենքը (Աշխատանքի վերաբերյալ Որենքների Կոդեքս, էջ 27) համաձայնություն է յերկու կամ ավելի անձանց միջև, վորով մի կողմը (վարձվողը) իր բանվորական ուժն առաջարկում է մյուս կողմին (վարձողին) վարձատրություն:

Խորհրդային իշխանությունը գյուղ-անտառ բանվորների պրոֆմիություն իրավունք ետվել բառերակների համար նրանց վարձողների հետ պայմանագրեր կնքել:

Վոչ խորհրդային մարմինները, վոչ միությունը թույլ չեն տա պայմանագրի մեջ մտցնել այնպիսի պայմաններ, վորոնք կարող են ստորացնել բառերակի և բառերակուհու մարդկային արժանապատվությունը, զրկել նրանց հասարակական և քաղաքական կյանքում մասնակցելու իրավունքից և դատապարտել նրանց աշխատանքի ճորտական պայմաններին:

Յեթե բառերակը, բառերակուհին, հովիվը, խորհրդային որենքները չիմանալով, պայմանագիր են կապել վատթար պայմաններով, քան այն պայմանները, վոր մատնանշված են «Ժամանակավոր կանոնները» մեջ, աշխատանքի պետական գյուղատնտեսական տեսչությունը և միությունը որդանները կարող են պահանջել պայմանագրի պայմանների փոփոխություն: (ՌԻՅԱԿԵՐ ԲԵՐ ՏԵՂԱԿԱՆ ՓՈՐՁԻԳ):

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԻ ՅԵ ԱՌՆԱՐՄ ՅՈՐԸՔԱՆՑՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐՂՈՒԹՅՈՒՆԸ

Բառերակների և բառերակուհիների համար վարձողի հետ պայմանագիր կնքելիս միությունն աշխատանքի պայմանագրում առաջադրում է միջակ տնտեսության համար քիչ պահանջներ, կուլակային և արդյունաբերական տնտեսությունների համար — մեծ պահանջներ:

Միությունը աշխ. պայմանագիր կնքելուց առաջ բառերակին ասում է,

«Արդյունաբերական-կուլակային տնտեսության մեջ աշխ. պայմանագիր կնքիր Աշխատանքի վերաբերյալ Որենքների կոդեքսի հիման վրա»:

«Աշխատավարձը և աշխատանքի մյուս պայմանները պետք է ցած չլինեն, քան տվյալ ռայոնի խորհրդային տնտեսություններում»:

«Ոժանդակ վարձու աշխատանքի կարիք ունեցող տնտեսությունների հետ պայմանագիր կնքիր «Ժամանակավոր կանոնների» և դրանց Հրահանգի հիման վրա»:

«Ձգտիր աշխատանքի լավագույն պայմանների և մեծ աշխատավարձի, քան ասված է ալդ «Ժամանակավոր կանոնների» մեջ, նայած այն տնտեսության կարողության, ուր վարձվում ես»:

Ինչո՞վ են տարբերվում արդյունաբերական տիպի տնտեսությունը առաջադրված պայմանները այն պայմաններից, վորոնք առաջադրվում են աշխատավորական տնտեսություններին, վոր վարձու աշխատանքը գործադրում են վորպես ոժանդակ աշխատանք:

Գյուղական արդյունաբերական-կուլակային տնտեսության մեջ միությունը պահանջում է բանվորական որը սահմանափակել 8 ժամով, չուրաքանչյուր ավելի աշխատած ժամի համար վճարել մեկ և կես և կրկնակի չափով, ինչպես ասում է դա Աշխատանքի Որենքների կոդեքսը: Յեթե պայմանագրում սահմանվում է բանվորական յերկար որ, միությունը պահանջում է, վորպեսդի աշխատավարձը պակաս չլինի, քան արտաժամյա աշխատանքի վարձն է:

Աշխատավորական տնտեսության մեջ միությունը պահանջում է 8 ժամից ավելի աշխատած ժամերի հա-

մար լրացուցիչ վճար, վորի չափը սահմանվում է բատրակի և վարձողի համաձայնությունով:

Տոն որվա աշխատանքի համար՝ արդյունաբերական տիպի գյուղական տնտեսություններում միությունը պահանջում է վճարել կրկնակի չափով, աշխատավորական տնտեսություններում — լրացուցիչ վարձ, վոչ պակաս սովորական բանվորական որվա աշխատավարձից՝ չուրաքանչյուր աշխատած տոն որվա համար:

Արդյունաբերական-կուլակային տնտեսության մեջ բատրակի և բատրակուհու աշխատավարձը պահանջելով միայն փողով, միությունը աշխատավորական գյուղական տնտեսությունից աշխատում է ստանալ աշխատավարձի դրամական մասի ավելացում ի հաշիվ մթերքի, տնտեսության հնարավորությունների սահմաններում: Այդպիսով, միությունը ձգտում է, վոր աշխատավարձի դրամական մասի չափը լինի, զիցուք, պեթ, պետական աշխատավարձի մինիմումի $2\frac{1}{3}$ -ից վոչ պակաս:

Արդյունաբերական տիպի տնտեսությունը պարտավոր է ապահովագրել իր մեջ աշխատող բատրակին ու բատրակուհուն:

Աշխատավորական գյուղական տնտեսությունից միությունը, համաձայնություն պալով, կամ ձգտում է բատրակին ու բատրակուհուն ապահովագրել տալ վարձողի կողմից — կամ, հիվանդության դեպքում, իսկ բատրակուհու համար ծննդաբերության դեպքում, պահպանել նրանց աշխատավարձն ու սնունդը ավելի յերկար ժամանակով, քան ալդ նախատեսված է «Ժամանակավոր կանոնների» մեջ (որինակ՝

21/2—3 շաբաթ): Իսկ արդյունաբերական-կուլակա-
լին տնտեսությունից, վոր բառարակ են վարձում
ավելի չերկարատե ժամանակի համար, միութունն
աշխատում և նրանց աշխատավարձն ու սնունդը
պահպանել հիվանդություն 5—6 ամսվա ընթացքում:

Արդյունաբերական տիպի տնտեսություններում
միութունն աշխատում և ձեռք բերել առանձին բնա-
կարան բառարակների և բառարակուհիների համար,
բանվորական հագուստներ՝ խորհրդատեսությունների
նորմայով, և լավ սնունդ, պայման դնելով դրա վո-
րակի մասին պայմանագրում:

Աշխատավորական տնտեսություններում միու-
թյունն աշխատում և բառարակների և բառարակուհիների
համար ձեռք բերել խրճիթում առանձին տնկյուն, տե-
րերի հետ միասին մի սեղան և բանվորական հագուստ-
ներ ըստ համաձայնություն:

Ահա հիմնական տարրերությունը այն պահանջ-
ների, վորոնք առաջադրվում են արդյունաբերական
տիպի գյուղական տնտեսության և այն տնտեսու-
թյան, վորը վարձու աշխատանքով ուղտվում և, վոր-
պես ուժանդակ աշխատանքով:

Կարողություն մարբեր տնտեսություններին
տարբեր պահանջներ առաջադրվում են նրա համար,
վորովհետև հարուստ տնտեսությունը, վորն իր ար-
տադրած մթերքները վաճառում և շուկայում և բառ-
րակներ ու բառարակուհիներ և վարձում ամբողջ տա-
րում, կարող և և վճարել ավելի և տալ ավելի լավ
սնունդ ու հագուստ, քան աշխատ. տնտեսությունը,
ուր յերբեմն տերերն իրենք և վատ են ապրում:
Միությունն ու բառարակությունը շահագրգռված են

հաստատել և ամրացնել բանվորների դաշնակցություն-
նը գյուղացիություն հետ, վոր խորհրդային իշխանու-
թյան հիմքն և հանդիսանում, չեն կարող միջակ և
չքաղոր տնտեսությունների մոտենալ նույն չափով,
ինչ չափով մոտենում են կուլակային արդյունաբերա-
կան տնտեսություններին: (Ուրիճակհե բեհ սեղակաճ
փաճից):

Հաշվի առնելով միջակ գյուղացիության գրու-
թյունը և կուլակից պահանջելով լավ պայմաններ
բառարակի աշխատանքի համար և լավ վարձատրություն,
միությունն ամեն կերպ հոգ և տառնում բոլոր բառարակ-
ների և բառարակուհիների համար աշխատանքի պայ-
մանները լավացնելու, աշխատավարձը բարձրացնելու,
ինչ տնտեսության մեջ ել աշխատելիս լինեն նրանք:

ԲԱՅՐԵՆՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՎԻՎՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՈՒՄ ԵՆ ԸՆԹ- ՊԵՍՄԱՆԳՐԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Բառարակության պաշտպանության խնդիրները
քննում են գյուղ-անտառմիություն բոլոր որդանե-
րը՝ կենտրոնական կոմիտեյի նախագահությունից
սկսած մինչև գյուղական բանվոր. կոմիտեն, գյուղ-
խաղորները և պատգամավորները:

Կենտրոնական կոմիտեն, բառարակության պաշտ-
պանության համար չեղած միութենական կազմակեր-
պությունների աշխատանքի վորձի հիման վրա, քն-
նում և, նախքան տեղերն ուղարկելը, աշխատ. պայ-
մանագրի և հաշվիթերթի ձևը և ցուցմունքներ և տա-
լիս նահանգական, շրջանային բաժանմունքներին և
անկախ ու ավտոնոմ հանրապետություններին միու-

Թշան կենտրոնական վարչության, թե ինչպես այս տարի ավելի լավ դնել բառարկների և հովիֆների պաշտպանութունը ամբողջ Հանրապետութունների Միության մեջ:

Միության անդական ներքին որգանները, հաշվի առնելով իրենց փորձը և վերապա որգանների ցուցմունքները, հրավիրում են զավառակային և ռաշոնային կոնֆերանսներ և ժողովներ առանձին գյուղերում ու շենքերում: Այդ ժողովներում ու կոնֆերանսներում քննության են առնվում այն պահանջները, վորոնք պետք է դրվեն աշխատ. պայմանագրերի մեջ:

Ձեկուցողը, ներկայացուցիչը, զավառակային կոմիտեյի բարտուղարը կամ անդամը զեկուցում է տալիս այն մասին, թե ինչ պահանջներ պիտի առաջադրել աշխատ. տնտեսութուններին և ինչ՝ արդյունաբերական-կուլակային տնտեսութուններին:

Բառարկներն ու բառակուհիները, հովիֆներն ու նրանց ոգնականները պետք է այդ ժողովներում ասեն, թե ինչ պիտի պահանջել վարձողից դրամով, մթերքով, բնակելու տեղ, հագուստ և այլն: Ակտիվ կերպով հանդես գալով, քննելով աշխատ. պայմանագրային աշխատանքների պակասներն ու հաջողությունները՝ ժողովին մասնակցողները կոգնեն միութենական մարմիններին՝ լավ դնել պայմանագրեր կնքելու աշխատանքը: Ձգտելով բարձրացնել բառարկների և հովիֆների աշխատավարձը, պետք է մտածել և այն մասին, վորպեսզի այդ պահանջները համապատասխանեն առանձին գյուղական տնտեսութունների կարողության: Դա նշանակում է, վոր ավելի ունևոր, կուլակային տնտեսութուններում, պետք է

ձգտել աշխատանքի լավագուցն պայմանների: Ժողովին մասնակցող բառարկների և բառակուհիների խորհուրդը, թե ինչ պահանջներ պետք է առաջադրել առանձին, իրենց հայտնի, տնտեսութուններին, նույնպես կարող է ոգտակար լինել:

Ժողովում մանրամասն քննելով զավառակ. կոմիտեյի, ռաշոն. կոմիտեյի և գյուղբանվոր. կոմիտեյի բարտուղարները, յուրաքանչյուր զիտակից բառարկ, առանձնապես պատգամավորը և պրոֆլիադորը, պետք է մանրամասն պատմեն և մյուս բառարկներին պետք է մանրամասն պատմեն և նրանց ոգնա ու բառարկուհիներին, հովիֆներին ու նրանց ոգնականներին, թե ժողովում ինչ պայմաններով վորոշյին վարձվել:

III. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԻՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՈՎ.

ԱՌԵՆՑ ԱՅԽԱՏՄԱՆԱԳՐԻ ԳՆԱՍ ԱՅԽԱՏԵԼՈՒ—ԿԽԱՐԱԿԵՐ

Վերջան շատ բատրակներ ու հովիվներ վորոշեն հենվել միության (երենց մասնակցութեամբ) գծած պահանջներին և չնահանջեն նրանցից, այդպիսով պահանջների ավելի մեծ մասը կմտնի պայմանագրի մեջ, և այդպիսով ավելի կլավանա բատրակների և հովիվների դրութիւնը:

Թե խորհրդային որենքը, թե միութիւնը պաշտպանում են բատրակին ու բատրակուհուն, հովիւն ու նրա ոգնականին, բայց բոլոր բատրակներն ու բատրակուհիները դեռ չգիտեն խորհրդ. որենքները և միշտ ել չեն կարողանում ոգավել որենքներին և միության պաշտպանութիւնից:

Նրանք հաճախ մոռանում են, վոր «մեկը կովի գաշտում չի կարող կովել»: Դա ճիշտ է: Մենակ բատրակը առանց միության պաշտպանության չի կարող պաշարել իր տիրոջ դեմ, ինչպես հարկն է:

Ահա մի քանի որինակ.

Ցերկու բատրակ, առանց պայմանագրի, աշխա-

տում են մի ունեւոր գյուղացու մօտ: Յեւ ջանք չեն խնայում:

Գիշեր և արդեն, և նրանք դեռ չեն կարողանում գործը վերջացնել: Բակը լիքն է ձիերով: Պետք է կիրտալ, ջուր կրել: Հագուստները վատն է, իրենցը: Գիշերներ և պատահում սառնում են: Տերը վոչինչ չի տվել, վատ ել կերակրում է:

Աշխատում են արյուն-քրտինք մտած, իսկ տերը մի կողմից ճչում է, հրամայում: Այդ բոլորը դեռ քիչ է նրա համար:

Յեկավ մի առգամ աշխատանքի տեսուչը և գյուղ-րանկոմի նախագահի հետ գնաց տեսնելու, թե սրա կամ նրա մօտ առանց պայմանագրի բատրակներ չեն աշխատում: Բատրակներին տեսնելով՝ հարցնում են տիրոջը.

— Սրանք ձեր բանվորներն են:

Տերն ազվեսի նման դեռ ու դեն է անում. — «Դրանք իմ չեղբայրներն են, քաղաքից են յեկել. գնացել էյին աշխատանքի: Բայց մեր տունը լիքն է, վոչինչ—կհագցնենք, կկապցնենք. խորթ հօ չեն, հարադատ են»: Գրկում է բատրակներին և հարցընում. — «Եղպիս չի»:

Ապշում են բատրակները, վախենում են—հօնկարծ տերը դուրս չանի: Յեւ պատասխանում են. — «Ճիշտ է, մենք սրա չեղբայրներն ենք... վոչինչ, լավ ենք ապրում»:

Հեռանում է աշխատեսուչը միության ներկայացուցչի հետ: Տերը ծիծաղում է: «Տեսաք, ինչ պատիվ ցույց տվի ձեզ, չեղբայրներս եք, մթամ և պետք է հասկանալ»: Բատրակները փրկեցին տիրոջը:

Բայց չերբ աշունը չեկա՛վ, տերը դուրս արավ
բատրակներին: Վոչ շոր ստացան, վոչ վարձ: Ինչպես
չեկել էլին, այնպես ել գնացին. բատրակներեց մեկն
սպառնաց տիրոջը, բայց վախեցա՛վ գանգատվել:

Ահա ինչպես վատ ե առանց պայմանագրի աշ-
խատելը: Տերը աշխատանքի ժամանակ նեղում ե, հա-
շիվ տեսնելիս՝ խաբում: Առանց աշխատայմանագրի աշ-
խատելու կերթա՛ս — մուրացիկ կմնաս:

Առանց աշխատայմանագրի մի գնա աշխատելու:

Հիշի՛ր, վոր որենքը պահանջում ե պարտագիր
կերպով գրավոր պայմանագիր կնքել: Մի պաշտպա-
նիր տիրոջդ, քեզ համար ավելի վատ կլինի:

ԱՌԼՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՅԽԱՏԱՆԱԳՐՆԵ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻ՝ ԿՆՔԻ

Մի ալլ բատրակ հասկացել եր արդեն, վոր ա-
ռանց պայմանագրի աշխատելը ձեռնտու չե, ու տիրոջ
հետ պայմանագիր ե կնքում: Միայն մի սխալ ե ա-
նում—պայմանագիրը կնքում ե առանց միության:
Գնում ե տիրոջ մոտ ու պայմանավորվում: Տերը նրան
խոստանում ե բնակելու տեղ: Պայմանագրում գրում
են. «վարձողը հատկացնում ե բնակելու տեղ», բայց
թե ինչ տեղ, այդ մասին չեն պայմանավորվում:
Բատրակը հիշում ե, վոր տերն իրեն խոստացել
ե, և չի մտածել պայմանագրի մեջ վորոջ հիշատակել,
թե ինչ տեղ:

Բայց չերբ գնում նալում են տեղը, դուրս ե
գալիս, վոր այն չի, ինչ ցանկացել ե:

Տերը բատրակին խոստացել եր, «կքնես տեղա-

շորում, վերմակ կտամ, բարձ կտամ»: Բայց, իսկա-
պես, բատրակը չի ստանում այն, ինչ խոստացված ե
չեղել. վատ ե ապրում, քնում մի անկյունում, ծղնտի
վրա:

Լինում ե այնպես, վոր տերը խոստանում ե լավ
սնունդ:

«Իմ սեղանը,—ասում ե նա բատրակին,—այն-
պես ե—հատը չկա: Իմ խոզերը, իմ հավերն ունեմ.
պատահում ե բուդ (ազդր) ե լինում, պատահում ե
հավ ենք տալակում, յուղոտ կերակուր ենք ունենում:
Լավ սնունդ, մի խոսքով»: Յեվ բատրակն ել, ահա,
հավատում ե. «Լավ կապրեմ,—մտածում ե.—տիրոջս
հետ սեղան կնստեմ: Իսկ նա ուտելիք շատ ունի»:
Միություն չի գնում, իսկ պայմանագիրն ուղղակի
գրում ե. «վարձողը պարտավորվում ե բատրակին
կերակրել որական 3 անգամ», և գրում, թե ինչ կե-
րակուր: «Այ, լավ ե, կուշտ կուտեմ»,—մտածում ե
բատրակը: «Մտածում եր փլավի մասին, ձեռը շորվա
ել չընկավ»:

Ուտում ե բատրակը վոչ տերերի հետ, ալլ մի
անկյունում, ուր անասուն են պահում: Յեվ վոչ թե
փլավ, ալլ ցամաք հաց ու ջուր. ահա և ամբողջ ճաշը:
Վատ ե ապրում—նիհարում ե:

Նույն բանը պատահում ե հագուստի հետ: Խոս-
քով լավ հագուստ ե խոստանում տերը, բայց տալիս
ե վատը, վորովհետե պայմանագրում լավ չեն պայմա-
նավորվել, թե հագուստն ինչպիսի պիտի լինի:

Ահա, որինակ, բատրակ Պողոսին տերը խոստա-
նում ե շալվար, այսպես-այնպես, «ե լավն ե, ասում
ե, կապեր ունի»:

Պողոսն ել մտածում է. «Լավ կլինի - կհագնեմ»:

Յեվ ստանում է հին, մաշված-քրքրված շալվար: Բատրակը վերցնում է ու մտածում. «Ամեն բան լավ կլինեիր—միայն մի բան ամուս, վոր ամեն տեղից ծակ է»:

Յերբեք առանց միության պայմանագիր մի կնքի: Գյուղխորհուրդը գրանցում է քո գրավոր համաձայնությունը վարձողի հետ, բայց իրավունք չունի պայմանագրի մեջ վորևէ բան փոխելու, քանի վոր դու այդպես էս համաձայնվել տիրոջ հետ: Միության որդանը (գյուղբանկումը, լիազորը, գավառակային կոմիտեն) գիտի այն բոլոր խորամանկությունները, վորոնց հաճախ գիտում են, ինչպես գիտես, վարձողները, վորպեսզի բատրակին խաբեն: Միությունը կողնի քեզ պայմանագրում ամեն ինչ վորոշ դրելու: Միութենական աշխատանքներով դու կարող ես ստանալ բոլորը, ինչի մասին պայմանավորվել ես, վորովհետև պայմանագրում բոլորը, ինչ հարկավոր է, պարզ և վորոշ կգրվի:

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՏՐԱԿԻՆ ՈՐՆՈՒՄ Ե ՉԵՌՔ ԲԵՐԵԼ ԼԵՎԵՐՈՒՅՆ ՊԵՏՄԵՆՆԵՐ ՅԵՎ ՄԵԾ ԵՆԵՑԱՎԱՐՉ

Ինչպես պետք է մոտենալ միութենական պայմանագիրը կնքելուն:

Նրանից հետո, յերբ բատրակներն ընդհանուր ժողովում քննություն առան իրենց պահանջները և վորոշեցին հաստատ մնալ դրանց, յուրաքանչյուր բատրակ մինչև տիրոջ հետ պայմանագիր կնքելը պետք

է խորհրդակցել գյուղբանկում կամ պրոֆլիազորի հետ:

«Յոթը հափիր—մեկ կտրիր», — ասում է առտը: Այդպես ել պետք է վարվել աշխատանքների հետ. նախ քան տիրոջ առաջարկած պայմաններին համաձայնելը յոթ անգամ մտածիր և ապա... գնա միություն իմանալու—համաձայնե՞լ դրանց թե վոչ:

Իսկապես, չեթե բատրակը վարձվելուց առաջ գնա գյուղբանկում կամ գյուղխազորի մոտ, նրանք միասին կարող են ճիշտ ասել, թե աշխատանքի ի՞նչ պայմաններ պետք է հիշատակել պայմանագրում, քանի ժամ աշխատել որական և վորքան ստանալ ամսական փողով ու մթերքով:

Վորքան ստանալ տոն որվա համար, չեթե աշխատելու բան լինի և տոն որերը:

Ինչ հագուստ պահանջել (շալվար, շապիկ, վոտնաման և այլն):

Սնունդը ինչպիսի պիտի լինի (որական քանի անգամ տաք կերակուր, վորքան և ինչպիսի հաց որական, շաքար թե քանի անգամ մեղեն):

Սրանից հետո միայն բատրակը կարող է բանակցություն սկսել վարձողի հետ, իմանալով, թե ինչ պահանջել նրանից, և դրդել տիրոջը պայմանագիր կնքել միության միջոցով:

Պրոֆմիության աշխատողը պայմանագիրը կընքելիս կպնդի, բատրակի հետ միասին, նշանակած պայմանների վրա, բայց կհաջողվի դրանք պայմանագիր մտցնել այն ժամանակ միայն, չերբ բատրակն ինքը ակտիվ կերպով պնդի դրանց վրա:

Տերերը չերբ տեսնեն, վոր բատրակները ակ-

տիվ կերպով պաշտպանում են միության պահանջները, ավելի շուտ զիջումներ կանեն:

ԸՆԹԱՏՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ՊԸՑՊԸՆԻՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԸՆՆՆԵՐԸ

Վատ ե, չեթե բատրակը պայմանագիր կնքելիս ակտիվ չե, քաշվում և համաձայնում ե վարձողին. և վոչ թե պաշտպանում ե միության ներկայացուցչին. այդ դեպքում միությանն ել դժվար կլինի բատրակի համար ձեռնտու պայմանագիր ձեռք բերել:

Միության ներկայացուցիչը դժվար դրություն մեջ ե ընկնում: Վարձող-կուլակը ստիպում ե: «Գրի», ասում ե, «գրի, ի՞նչ ես կուչուհուկ անում, — բատրակ Պողոսը պարտավորվում ե աշխատել տերերի հետ, նաե տոն ուրերը, և տոն ուրերի աշխատանքի համար ստանալ քսանական կոպեկ: Չե՞ վոր նա համաձայն ե»: Իսկ բատրակը քաշվում ե. — «Յես աշխատանքից, ի՞րր, չեմ հրաժարվում»:

Միության ներկայացուցիչը պնդում ե այն բանի վրա, վորպեսզի պայմանագրում պարզ գրվի նոր հագուստ ստանալու մասին: Կուլակը պնդում ե, թի կտա հին հագուստ: Բատրակն ելի լուում ե...

Միությանը դժվար ե տուպիսի բատրակի պաշտպանելը: Անակտիվ բատրակին միության կնքած պայմանագիրն ել քիչ կարող ե ոգնել:

Այդ պատճառով միությունն ասում ե բատրակին — ակտիվ չեղիր: Պայմանագիր կնքելիս՝ պաշտպանիր միության պահանջները: Ոգնիր միությանը քո շահերը պաշտպանելու: Յեթե համառ լինես և ձեռք

ձեռքի տաս միության հետ, այն ժամանակ միության կնքած աշխատանքները կտա քեզ աշխատանքի լավ պայմաններ:

ՄԻՈՒԹՅԱՆ ԿՆՔԸ ԸՆԹԱՏՄԱՆԱԳԻՐՆ ԻՆՉ Ե ՏԵԼԻՍ Բ Ը Տ Ր Ը Կ Ի Ն

Ահա թե բատրակը, բատրակունին, հովիվը ինչ կարող են ձեռք բերել միության աշխատանքներով:

Միության կնքած աշխատանքներով — քնում ես խրճիթում՝ անկողնի մեջ, կերակրվում ես տիբերիդ հետ և ուտում ես այն, ինչ նրանք են ուտում, ժամանակին, ինչպես պայմանագրվել ես, ստանում ես թե փող, թե հագուստ: Ինչո՞ւ: Վորովհետև միությունը ոգնում ե քեզ պայմանագրում պարզ գրելու բոլորը, ինչ պետք ե:

Այդ պատճառով միությունն ասում ե բատրակներին.

«Տիրոջը խոսքին մի հավատա: Միության պայմանագրին հավատա: Հիշիր, ինչ վոր պայմանագրում գրես, այն ել կարող ես ձեռք բերել:

Որինակ, պայմանագրում նշանակված ե, թե բատրակը ախրոջից աշխատանքի սկզբում պիտի ստանա 5 փութ հաճար, մայիսի 15-ին 25 ուրբի զրամով, իսկ ֆնացածը չերկու նվագով — հուլիսին և վերջնական հաշիվ տեսնելիս — հոկտեմբերին, և տերը առանց ուշացնելու պետք ե փողը վճարի ժամանակին: Յեթե տերը չվճարի, կամ աշխատավարձի վճարումը ուշացնի, այդ ժամանակ բատրակն ու միությունը, հիմնվելով աշխատանքների վրա, կարող են հաշտա-

րար հանձնախմբի կամ խորհրդ. դատարանի միջոցով ստիպել տիրոջը իր պարտավորութիւնները կատարելու:

Այդպէս ել մյուս բաներում,—ինչի մասին պայմանավորվել ես, աչն ել կատանաս:

Պայման ե դրել, որինակի համար, բատրակը պայմանագրում, թե տոն որվա աշխատանքի համար պետք ե ստանա մի ուրիշ որական. տերը, ըստ պայմանագրի, պարտավոր ե այդ վարձը վճարելու:

Պայմանագիր կնքելիս հիշիր, վոր որենքը առանձին վարձ ե սահմանել տոն որվա ե հանգստի որվա աշխատանքի համար: Պայմանագրում պարզ գրիր, թե վորքան պետք ե տերդ ավելացնի, չեթե առիթ լինի տոներին աշխատելու:

Պայմանագրով վորոշած բանվորական ժամերին աշխատելուց հետո բատրակը կարող ե բանվորական ժամանակից դուրս իր ժամանակն ոգտագործել իր հաշիցողութիւնով:

Գնա բատրակի անկյունը, իմացիր, թե ինչ են գրում բատրակների թերթում:

Միութիւնը, պաշտպանելով բատրակի ե բատրակունու աշխատանքը, հոգ ե տանում նրանց զարգացման մասին: Կարմիր անկյունում, աւումբում, «բատրակի անկյունում», խրճիթ-ընթերցարանում—յուրաքանչյուր բատրակ ե բատրակունի, հովիվ ե հովիւ ոգնական կարող են իմանալ, թե ինչպէս պետք ե պաշտպանել իրենց շահերը, ինչպէս լավագոյն ապրուստ ձեռք բերել:

Յեթե բատրակը հիվանդացել ե, որենքը պահանջում ե, վոր վարձողը նրան տանի հիվանդանոց կամ բժիշկ կանչի տուն:

Պայմանագիր կնքելիս պետք ե հիշել.—

Որենքով, բատրակի հիվանդութեան դեպքում, նրա աշխատավարձն ու աշխատանքը պահվում են մի ամսից վոչ պակաս, չեթե տերը նրան վարձել ե ամբողջ սեզոնի համար, ե չեթե շաբաթից վոչ պակաս, չեթե մշակը վարձված ե պակաս ժամանակով:

Յեթե բատրակն ապահովագրված չե, այդ ժամանակ նա միութեան հետ միասին պետք ե ձգտի պայմանագիրը յերկար ժամանակով կապելու, վորի ընթացքում տերը վճարում ե նրան (հիվանդութեան դեպքում) աշխատավարձը:

Բատրակունին, չեթե նա վարձողի կողմից ապահովագրված չե, շահագրգռված ե նույնպէս աչն բանում, վորպեսզի ծննդաբերութեան կամ հիվանդութեան ժամանակ տերը վճարի իր աշխատավարձն ավելի յերկար ժամանակով, քան մատնանշված ե այդ որենքում:

Միութեան հետ միասին առանձին տերերի մոտ աշխատող բատրակներն ու բատրակունիները, հովիւներն ու հովիւների ոգնականները վարձողներին առաջադրված իրենց պահանջներում պետք ե ձգտեն պայմանագրում յերկար ժամանակահատանելու, վորի ընթացքում վարձողը պետք ե վճարի նրանց աշխատավարձը, հատկացնի բնակելու տեղ ե սնունդ հիվանդութեան դեպքում:

Միջակ տնտեսութիւններում, վոր բատրակ ե բատրակունի վարձում են վոչ չեթե աշխատանքների համար, պետք ե ձգտել, համաձայնութեամբ, վոր հիվանդութեան դեպքում վճարվի աշխատավարձը, պահպանվի բնակելու տեղը ե սնունդը, դիցուք, ինչպէս վերե

ասվեց, $2\frac{1}{2}$ —3 շաբաթ ժամանակով արդյունաբերական-կուլակային տնտեսություններում, վոր վարձու ուժով ողտվում են լերկարատե ժամանակով, պետք է ձգտել, վոր հիվանդության դեպքում պահպանվի աշխատավարձը և սնունդը, դիցուք, 5—6 շաբաթվա ընթացքում:

Հաճախ է պատահում, լերը հովիվները համայնքների մոտ աշխատելիս ստանում են սնունդ, հագուստ և գիշերելու տեղ հերթով—սրա-նրա մոտ:

Հովիվ ՅԵՎ Հովվի ՈԳՆԵԿԵՆ, ՊԵՀԵՆՁԻՐ ԲԵՆՎՈՐԵԿԵՆ ՀԵՂՈՒՍ ՅԵՎ ՍՆՈՒՆԳ ՀԵՍԵՐԵԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Բայց մի խրճիթում վարակ կա—սիֆիլիս կամ մի ուրիշ վարակիչ հիվանդություն: Շատ ել սնունդը լավ է, բայց ուտես—կտուժես,—մտածում է հովիվը: Զգովում է ու չի ուտում:

Մի ուրիշ խրճիթում քուրք են տալիս: Մեջը լիքը վոջիլ է, բուրդը կախկիսված: Մի աշնայիսի քուրք, վոր կարելի չե վերցնել ու վառել: Յերրորդ խրճիթում հովվին լավ են ընդունում, բայց իրենք ուտելու բան չունեն գրեթե: Սեղանի վրա գետնախնձոր կա ու ջուր: Հովվի բանը դարձյալ վատ է:

Հովիվն ու հովվի ոգնականը սրա-նրա տանը, հերթով, կերակրվելուց, սրանից-նրանից հագուստ ու քնելու տեղ ստանալուց ավելի կլիառվեն, քան կոգտըվեն: Նրանք հեշտությամբ կարող են հիվանդանալ: Հերթով ուտելիք, բնակելու տեղ ու հագուստ ստանալով՝ հովիվը պետք է հարմարվի բուրդին և ամեն մեկին, և հաճախ աշնայես է լինում, վոր նա ստանում է

անբավարար ու վատ սնունդ: Մի տնտեսության մեջ նա վատ սնունդ ստանում է նրա համար, վոր շատ և ավելի լավը այնտեղ տալ չեն կարող, մի ուրիշ տեղ—ամեն մարդ բարեխղճաբար հովվին չի կերակրում: Ահա թե ինչու յուրաքանչյուր հովիվ և հովվի ոգնական պետք է աշխատեն գիշերելու տեղ և սեղան ստանան մի տեղում և նոր մշտական բանվորական հագուստ հասարակությունից:

Հովիվ, հիշիր—առողջություն չես կարող գնել. յեթե կորցնես, հետո ել յետ չես դարձնի: Հասարակությունից պահանջիր բանվորական հագուստ—նաքեզ կաշտպանի անձրեկից ել:

ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԵՎՈՒՄ Ե ԱՇԽԱՏՄԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Միության որգանների կողմից բատրակներին և հովիվներին պաշտպանելը չի սահմանափակվում ներանց համար պայմանագրեր կնքելով:

Գյուղական բանվորկոմի նախագահը, անդամները և գյուղի ազորը շրջում են գյուղական տնտեսությունները և հարցուփորձում են բատրակներին, թե պայմանագրերն ինչպես է գործադրվում: Հուլիսից դիր միության վրա, բայց ինքզ էլ մի քնի—հետևիր, թե վարձողն ինչպես է կատարում պայմանը: Յուրաքանչյուր բատրակ, աշխատանքի պայմանները վատթաքանալու (հակառակ պայմանագրի) առաջին իսկ դեպքում պետք է ինքը դիմի գյուղբանվորկոմ կամ գյուղի ազորին, վարձողից չվախենալով: Միությունը միջոցներ ձեռք կառնի, վոր բատրակն ու բատրակու-

հին, հովիվն ու հովվի ոգնականը չնեղվեն տիրոջ կողմից: Յեթե միության ներկայացուցչին չհաջողվի համաձայնություն գալ տիրոջ հետ տեղում, այդ դեպքում նա տիրոջն առաջարկում է բատրակի հետ ունեցած վեճը քննել հաշտարար հանձնաժողովում, վոր կազմվում է վարձողից ու միության ներկայացուցչից, գավառակային գործկոմի նախագահի կամ նրա տեղակալի նախագահությամբ:

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՓՈԳՐԱՏԱՐԵՆԸ ՈՐԳԱՆԻՄ ԵՆ ԲԱՏՐԱԿԻՆ ԻՐ ԻՐԱՎՈՐՆԵՐՆԵՐԸ ՊԼՇՏՊԼՆԵԼՈՒ

Յեթե վարձողը հրաժարվի հաշտարար հանձնաժողովից, կամ հաշտարար հանձնաժողովում մի կողմից վարձողի, մյուս կողմից բատրակի միջև համաձայնություն չկապանա, այդ դեպքում միությունն ոգնում է բատրակին դիմել դատարան և դատարանում էլ կաշտպանի նրա շահերը:

Խորհրդային ժողդատարանը պաշտպան է կանգնում բատրակին ու բատրակուհուն, հովվին ու հովվի ոգնականին, յեթե տեղը խախտում է որեւից կամ աշխատանքները:

Բատրակը կբացատրի խորհրդային դատարանի առաջ, թե վարձողը պայնագրի պայմաններն ինչու է խախտել: Միության ներկայացուցչից կաշտպանի բատրակին և կաշխատի, վոր տեղը կատարի պայմանագիրը: Բատրակը կարգին և բարեխիղճ աշխատել է, և յեթե տեղը փորձ անի վատթարացնել նրա դրությունը, ծանրաբեռնել նրան չափազանց աշխատանք

քով, խորհրդ. դատարանից կստանա արժանի պատիժ: (ԲԵՐ ՆԵՂԱԿԱՆ ՈՐԻՃԱԿԵՐ):

Բայց վոչ դատարանը, վոչ միությունը չեն ոգնի այն բատրակին ու բատրակուհուն, վորոնք իրենց պարտականություններին կվերաբերվեն անհոգ:

Որինակ, հովվի մեկը վարձվել է նախիր արածեցնելու: Պետք է աչքից չորս արած հետևել կովերին, վոր արտերը չընկնեն—ուտեն: Իսկ հովիվը արևի տակ տաքանալով՝ քնում է իր համար:

Չարթնում է—նախիրը արտը կերել է:

Այսպիսի հովվին վոչ միությունը, վոչ դատարանը չեն պաշտպանի: Վոր նախիր ես վերցրել արածեցնելու—մի քնի:

Լինում է յերբեմն և այսպիսի բան: Հնձի ժամանակն է—ամենաչեռուն որերը աշխատանքի: Թե տեղը, թե նրա ամբողջ ընտանիքը, առանց ձեռները ծալելու, աշխատում են, իսկ բատրակը, փոխանակ աշխատանքի գնալու, խմում է, հարբում:

Աշխատանքի ժամանակ հարբեցողներին վոչ միությունը, վոչ դատարանը չեն պաշտպանում:

Վարձվել ես աշխատելու—հարբեցողությամբ մի գրառվիր:

Բատրակներին ու հովիվներին պաշտպանելով, ձգտելով նրանց աշխատանքի համար լավագույն պայմաններ, միությունը պայքարում է անկարգապահության և բատրակների կողմից աշխատանք (պայմանագրի համաձայն) չկատարելու դեմ և դատարանը րակշիական աշխատանք է կատարում իր անդամները շրջանում:

IV. ԿԱՏԱՐԵՆՔ ԸՆԿ. ԼՅՆԻՆԻ ԱՎԱՆԳՆԵՐԸ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒԹԵՂ Ե ԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԱՆՏԻՎԱՐԹՅԱՆՔԸ

Գրագիտ և հասարակականորեն զարգացած բաժնիկներն ավելի լավ կարող են պաշտպանել իր շահերը, կարող են լինել վոչ միայն լավ աշխատող գյուղական տնտեսություն մեջ, այլև ամբողջ գյուղի համար ոգտակար հասարակական գործիչ, կարող են կազմակերպել, դաստիարակել և պաշտպանել մյուս բաժնիկներին:

Աշխատանքից ազատ ժամերին գիտակից բաժնիկներն ու բաժնակուհիները կարգում են «Մանկալը» և անդրադառնալով պատմում, թե խորհրդային որևէ մեկն ու գյուղատնտեսությունները ինչպես են պաշտպանում բաժնիկի աշխատանքը:

Միութենական որդաններին՝ նրանց ամենօրյա ծանր աշխատանքի մեջ ակտիվ աջակցություն ցույց տված կլինի ամեն մի բաժնիկ ու բաժնակուհի, չեթե միութիւնը ոգնի՝ բոլոր գյուղատնտեսական և անտառային բանվորներին միացնելու մի սերտ ընտանիքի մեջ — պրոֆեսսիոնալ միութիւն մեջ:

Միութենական ամեն մի որդան շատ ավելի լավ

կաշխատի, չեթե բոլոր բաժնակներն ու բաժնակուհիները ոգնեն նրան աշխատանքի կնքելիս և կիրառելի և փոխադարձ ոգնություն գանձարկղ, կազմակերպելիս, և աշխատեն միութիւն մեջ գյուղատնտեսական բանվորների նորանոր շերտեր զբաղելու:

Վարձան ակտիվ ու գիտակից են բաժնակներն ու բաժնակուհիները, այնքան ավելի ուժեղ են միութիւնը, այնքան ավելի լավ կարող են պաշտպանել նա բաժնակների շահերը:

Միութիւնն աճման հետ միասին աճել է և աշխատանքային թիվը, ուժեղացել է միութենական պաշտպանությունը:

Ահա ինչպես է աճել գյուղատնտեսական միութիւնը, աշխատող ինչպես է ուժեղացել բաժնակների և հովիվների պաշտպանությունը:

1923 թ. հունվ. 1-ին միութ.	անդամ. թիվը	էր	249,072
1924 թ. » 1-ին » » »			280,616 »
1925 թ. » 1-ին » » »			415,103 »
1926 թ. » 1-ին » » »			856,925 »
1926 թ. հոկտեմբերին » »			1,094,897 »

Այդ ժամանակաշրջանում աշխատանքային թիվը աճել է հետևյալ կերպով.

Ամբողջ 1923 թ. կնքվել է	19,100	պայման.
» 1924 » » »	376,100	»
» 1925 » » »	819,400	»

1926 թ. հունվարից — սեպտեմբեր կնքվել է 1009200. այսինքն՝ 1923 թ. համեմատութիւնը 54 անգամ ավելի:

Ահռում ե միութեան անդամները թիվը, ուժեղա-
նում ե միութեան պաշտպանութիւնը, մեծանում ե
աշխատանքների ընդգրկումը: Հենց գյուղատնտե-
սական բանվորների շրջանից առաջ են գալիս միու-
թեանական նոր աշխատավորներ:

ՊՐՈՓԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱԶՄԱՆԵՐՊՈՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԳ.

ԻՆՏԵՆՏԻՎՅԱՆ ՅԵՎ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒ- ՍԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻ ՀԵՆՐԵՆՆԵՆ ԵՆ

ԽՍՀՄ գյուղատնտեսական և անտառային բան-
վորների միութիւնը հանդիսանում ե խորհրդային
յերկրի՝ պրոֆմիութեան մեջ կազմակերպված բանվոր
դասակարգի ջոկատներից մեկը: Գյուղատնտես. և
անտառային բանվորների միութիւնն (հիմնված ե
1921 թ.) ստեղծելու հեղինակը Վլ. Ի. Լենինն ե: Մեր
միութիւնը տարեցտարի աճում ե: Նա իր աշխա-
տանքը կատարում ե Համամիութենական Կոմմունիս-
տական Կուսակցութեան ղեկավարական գաղափարական
ղեկավարութեան ներքո և ղեկավարութեամբ պրոֆ
միութեան Համամիութենական Կենտրոնական Խոր-
հրդի, Վորը գլխավորում ե **ԽՍՀՄ** ամբողջ պրոֆշուր-
ժումը: Առաջավոր, կազմակերպված գյուղատնտեսա-
կան և անտառային բանվորները, Վոր միացած են
ԽՍՀՄ գյուղատնտեսական և անտառային բանվոր-
ների պրոֆմիութեան մեջ, պաշտպանում են **ԽՍՀՄ**
բոլոր գյուղատնտեսական և անտառային բանվորների
շահերը և աշխատում են գրավել նրանց իրենց շար-
քերը: Կոմմունիստական Կուսակցութիւնը և խոր-

հրդային իշխանութիւնն ոգնում են մեր պրոֆմիու-
թեանը՝ կազմակերպել և պաշտպանել գյուղատնտես.
և անտառային բանվորներին և մասնակից դարձնել
սոցիալիզմի շինարարութեան:


Աշխատավորների մեծ ղեկավար ընկ. Լենինը
գյուղատնտեսական բանվորների համագումարում,
Վոր տեղի չե ունեցել Պետրոգրադում 1919 թ. մարտի
12—14-ը, ասել ե.

«Ձեր միութիւնը, Վորի հիմքը գնում եք գուժ
այստեղ, մոտ ապագայում կգառնա գյուղատնտեսա-
կան բանվորների միասնական պրոֆմիութիւնը, եւ
կգառնա խորհրդ. իշխանութեան իսկական հեճա-
րանը գլուղում, եւ կլինի հեճարան յեՎ գլուղական
ամբողջ կյանքը փոխելու առաջավոր բանակ»:

Կատարենք ընկ. Լենինի ավանդները:

Խորհրդ. իշխանութեան հետ միասին, Համամիու-
թեանական Կոմմունիստական Կուսակցութեան ղեկավա-
րութեամբ, միութեան մեջ կազմակերպված գյուղա-
տնտես. և անտառային բանվորները, գտնվելով **ԽՍՀՄ**
պրոֆմիութիւններին (Վորոնց գլխավորում ե **ԽՍՀՄ**
Պրոֆհոսիոնալ Միութիւնների Համամիութենական
Կենտրոնական Խորհուրդը) շարքերում կոգնեն՝ խորհրդ.
իշխանութիւնը գլուղում ամրապնդելու, կգառնան
առաջավոր բանակ «ամբողջ գլուղական կյանքը
փոխելու»:






217-112

217-112

« Ազգային գրադարան



NL0199246



ԳԻՆԸ 15 ԿՈՊ.